



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

“ 10 ” մայիսի 2012թ


№ 50-Ա .

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ <<ԵՐԱԶ ԻՄ ԵՐԿԻՐ>> ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ <<ԿԱՊԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ, ԾՐԱԳԻՐԸ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.12 կետի բ) և 1.19 կետի ա) ենթակետերի դրույթներով, համաձայն <<Հայաստանի Հանրապետության 2012թ. պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 08.02.05.03. <<Մշակութային միջոցառումների իրականացում>> ծրագրով նախատեսված հատկացումների, **ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում <<Երազ իմ երկիր>> մարզամշակութային միջոցառում կազմակերպելու նպատակով 500.0 հազ. դրամ տրամադրել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության <<Կապանի մշակույթի կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը, նրա հետ կնքելով համապատասխան պայմանագիր:
2. Հաստատել << Երազ իմ երկիր >> մարզամշակութային միջոցառման կազմակերպման և անցկացման կազմակերպական կոմիտեի կազմը, անցկացման ծրագիրը, կանոնադրությունը, ծախսերի նախահաշիվը և ժամանակացույցը՝ համաձայն 1-5 հավելվածների:
3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ միջոցառումների և գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

 Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ

2012թ. մայիսի 10  
ք. Կապան



Հավելված 3  
«Սյունիքի մարզպետի  
2012թ. մայիսի 10-ի  
N 50 -Ա որոշման

## Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«Երազ իմ երկիր» մարզամշակութային միջոցառման

### Միջոցառման նպատակն է

Հանրությանը ներկայացնել, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի և ԻԿՕՄ-ի նախաձեռնությամբ մայիսի 18-ը նշվում է որպես Թանգարանների միջազգային օր: Արդեն ութերորդ տարին է, ինչ Ֆրանսիայի մշակույթի նախարարության նախաձեռնությամբ, Եվրոպայի խորհրդի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարձր հովանու ներքո իրականացվում է «Թանգարանների գիշեր» համաեվրոպական ակցիան, որին միացել է նաև Հայաստանի Հանրապետությունը: «Թանգարանների գիշեր» համաեվրոպական միջոցառման կարևորագույն խորհուրդը հասարակության համար տոնի ստեղծումն է: Այս տարվա միջազգային կարգախոսն է՝ «Թանգարանները փոփոխվող աշխարհում»: Նկատի ունենալով Հայ տպագրության 500-ամյակը «Թանգարանների գիշեր» միջոցառման հայկական կարգախոսն է՝ «Գիրը փոփոխվող աշխարհում»: Թանգարաններում կկազմակերպվեն տարբեր միջոցառումներ՝ ցուցահանդեսների բացում, հուշ-երեկոներ, հանդիպումներ, բաց դասեր, ֆիլմերի դիտումներ, համերգներ և այլն:

### Միջոցառման պատվիրատուն և կատարողը

Թանգարանների միջազգային օրվան նվիրված «Երազ իմ երկիր» մարզամշակութային միջոցառման պատվիրատուն է՝ «Սյունիքի մարզպետարանը, կատարողը՝ «Սյունիքի մարզային ենթակայության «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը՝ համատեղ մարզի քաղաքային համայնքների:

### Միջոցառման ժամկետը և վայրը


Միջոցառումները անց են կացվելու ս/թ մայիսի 18-ին մարզի քաղաքային համայնքներում, Կապանի երկրագիտական թանգարանում:

## Միջոցառման ընթացքը և ծախսերը

<<Երազ իմ երկիր>> մարզամշակութային միջոցառումները կազմակերպվում են ըստ ծրագրի, որը հաստատված է ՀՀ Սյունիքի մարզպետի կողմից, որտեղ արտացոլված են և ծրագրի ժամանակացույցը և առանձին համայնքներում միջոցառումների անցկացման վայրը և ժամանակը: Միջոցառման ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները համաձայնեցվում են կազմկոմիտեի հետ: Միջոցառումների անցկացման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է պատվիրատուի կողմից կատարող կազմակերպությունը:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի

աշխատակազմի ղեկավար



Ռ. Նազարյան

Հավելված 5  
 ՀՀ Սյունիքի մարզպետի  
 2012թ. մայիսի 10 - ի  
 N 50-Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

<<Երագ իմ երկիր >> մարզամշակութային միջոցառման

Հ/հ	Միջոցառման անվանումը	Ժամկետը	Վայրը
1	<<Թանգարանային գիշեր>> միջոցառում՝ նվիրված թանգարանների միջազգային օրվան	2012թ. Մայիսի 18	ք. Կապան, Գորիս, Սիսիան
2	<<Գրքերի ցուցադրություն>> նվիրված Հայ գրատպության 500-ամյակին	2012թ. Մայիսի 18	Մարզի թանգարաններ
3	Համերգային ելույթներ՝ ազգագրական երգերի, ժողովրդական պարերի, դասական երաժշտության կատարումներ:	2012թ Մայիսի 18	Կապանի երկրագիտական թանգարանի տարածք
4	<<Թանգարանային գիշեր>> միջոցառման հանդիսավոր բացում	2012թ Մայիսի 18	թանգարաններ
5	Էքսկուրսիաների կազմակերպում	2012թ Մայիսի 18	թանգարաններ
6	Հյուրասիրություն ազգային ավանդական ուտեստներով	2012թ Մայիսի 18	Կապանի երկրագիտական թանգարան
7	2012թ Մայիսի 18		Կապանի երկրագիտական թանգարան

ՀՀ Սյունիքի մարզպետարանի  
 աշխատակազմի ղեկավար

Ռ. Ղազարյան

Հավելված 4  
 ՀՀ Սյունիքի մարզպետի  
 2012թ. մայիսի 10-ի  
 N 50-Ա որոշման

**Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ**

**<<Երազ իմ երկիր >> մարզամշակութային միջոցառման**

Հ/հ	Ծախսերի անվանումը	Հոդված	Գումարը /դրամ/
1	Մասնագիտական ծառայությունների ձեռք բերման ծախսեր	4240.00	125.0
2	Մարքեր և սարքավորումների վարձակալում	4216.22	30.0
3	Սննդի ծառայության ծախսեր	4236.21	50.0
4	Նվերներ	4237.12	125.0
5	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239.11	150.0
6	Գրասենյակային նյութեր և ապրանքներ	4261.11	20.0
	Ընդամենը	-	500.0

ՀՀ Սյունիքի մարզպետարանի  
 աշխատակազմի ղեկավար




Ռ. Նազարյան

Կ Ա Ձ Մ Կ Ո Մ Ի Տ Ե

<<Երազ իմ երկիր >> մարզամշակութային միջոցառման

1. Ս. Խաչատրյան - ՀՀ Սյունիքի մարզպետ, նախագահ
2. Վ. Գրիգորյան - ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ /տեղակալ/
3. Լ. Հարությունյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
4. Ա. Մարոյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
5. Ս. Դավթյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ
6. Ա. Աթայան - Կապանի քաղաքապետ (համաձայնությամբ)
7. Ն. Ոսկանյան - Գորիսի քաղաքապետ (համաձայնությամբ)
8. Ս. Հայրապետյան - Մեղրիի քաղաքապետ (համաձայնությամբ)
9. Մ. Զաքարյան - Ագարակի քաղաքապետ (համաձայնությամբ)
- 10 Վ. Գևորգյան - Քաջարանի քաղաքապետ (համաձայնությամբ)
11. Ա. Հակոբջանյան - Սիսիանի քաղաքապետ (համաձայնությամբ)
12. Վ. Արզումանյան - <<Կապանի մշակույթի կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրեն

ՀՀ Սյունիքի մարզպետարանի  
աշխատակազմի ղեկավար



Ռ. Ղազարյան

**Ծ Ր Ա Գ Ի Ր**

<<Երազ իմ երկիր >> մարզամշակութային միջոցառման

**Միջոցառման նպատակն է**

Հանրությանը ներկայացնել, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի և ԻԿՕՄ-ի նախաձեռնությամբ մայիսի 18-ը նշվում է որպես Թանգարանների միջազգային օր: Արդեն ութերորդ տարին է, ինչ Ֆրանսիայի մշակույթի նախարարության նախաձեռնությամբ, Եվրոպայի խորհրդի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարձր հովանու ներքո իրականացվում է «Թանգարանների գիշեր» համաեվրոպական ակցիան, որին միացել է նաև Հայաստանի Հանրապետությունը:

«Թանգարանների գիշեր» համաեվրոպական միջոցառման կարևորագույն խորհուրդը հասարակության համար տոնի ստեղծումն է:

Այս տարվա միջազգային կարգախոսն է՝ «Թանգարանները փոփոխվող աշխարհում»: Նկատի ունենալով Հայ տպագրության 500-ամյակը «Թանգարանների գիշեր» միջոցառման հայկական կարգախոսն է՝ «Գիրը փոփոխվող աշխարհում»:

Թանգարաններում կկազմակերպվեն տարբեր միջոցառումներ՝ ցուցահանդեսների բացում, հուշ-երեկոներ, հանդիպումներ, բաց դասեր, ֆիլմերի դիտումներ, համերգներ և այլն:

Միջոցառման ծրագրում կիրականացվեն՝

- «Գրքերի ցուցադրություն» նվիրված Հայ գրատպության 500-ամյակին:
- «Հին և նոր Սյունիք >> հազվագյուտ հին և նոր լուսանկարների և հնագիտական եզակի արժեքների ցուցադրություն:

-«Վահանավանք-1100» լուսանկարների և Վահանավանքից հայտնաբերված նյութերի ցուցադրություն:

-«Հիշողություն» /19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի Սյունիքի պատմություն/ ընթերցումների, լսումների, դասախոսությունների կազմակերպում մարզի ուսումնական հաստատություններում:

-«Սյունիքի պատմություն և պատմական հուշարձաններ» և «Բրեստի ամրոց» ֆիլմերի ցուցադրություն:

- Համերգային ելույթներ՝ ազգագրական երգերի, ժողովրդական պարերի, դասական երաժշտության կատարումներ:

«Սյունիքի մարզպետարանի  
աշխատակազմի ղեկավար



Ռ. Նազարյան